Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողություն

Ժողովրդավարական կառավարման շրջանակներում հետախուզական հաշվետու գործունեության երաշխավորում

Տեղեկագրերի շարքի մասին

Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում (անգլ.՝ «SSR Backgrounders») համառոտ ներածական տեղեկություններ են ներկայացվում անվտանգության ոլորտի լավ կառավարման («ԱՈ լավ կառավարում», «ԱՈԼԿ») և անվտանգության ոլորտի բարեփոխումների («ԱՈԲ») թեմաների և հասկացությունների վերաբերյալ: Տեղեկագրերի շարքում, միջազգային փորձի լայն շրջանակի հիման, վրա ամփոփվում են ընթացիկ քննարկումները, տրվում հիմնական հասկացությունների բացատրությունները, վերլուծվում առանցքային հակասությունները: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերում չեն խրախուսվում լավ կառավարման կամ բարեփոխումների կոնկրետ մոդելներ, քաղաքականություններ կամ առաջարկություններ, փոխարենը՝ առաջարկվում են լրացուցիչ աղբյուրներ, որոնք ընթերցողներին թույլ կտան ընդլայնել իրենց գիտելիքները թեմաներից յուրաքանչյուրի վերաբերյալ: Անվտանգության ոլորտի բարեփոխումների վերաբերյալ տեղեկագրերը տեղեկատվության օժանդակ աղբյուր են հանդիսանում անվտանգության ոլորտի կառավարման և բարեփոխումների շահագրգիռ կողմերի համար, ովքեր ձգտում են հասկանալ, սակայն միևնույն ժամանակ քննադատաբար գնահատել ԱՈ լավ կառավարման և ԱՈԲ-ի ներկայիս մոտեցումները:

ԱՈԲ այս տեղեկագրի մասին

ԱՈԲ այս տեղեկագրում բացատրվում է, թե ինչպես են ժողովրդավարական հսկողության և վերահսկողության սկզբունքները կիրառվում հետախուզական ծառայությունների նկատմամբ: Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողությունը կարևոր է, քանի որ հետախուզական ծառայությունները կարող են վտանգել ժողովրդավարական կառավարումը, իրավունքի գերակայությունը և մարդու իրավունքները, անգամ եթե գործում են հանրային շահից ելնելով: Անվտանգության ոլորտի լավ կառավարման սկզբունքի կիրառումը ժողովրդավարական հսկողության և վերահսկողության համակարգի միջոցով ապահովում է հետախուզական ծառայությունների արդյունավետ և հաշվետու գործելակերպը՝ միևնույն ժամանակ ապահովելով պետության և վերջինիս ժողովրդի անվտանգությունը:

ԱՈԲ այս տեղեկագիրը տալիս է հետևյալ հարցերի պատասխանները.

Ինչու՞ է կարևոր հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը *Էջ 2*
Ինչպե՞ս է գործում հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը *Էջ 2*
Որո՞նք են հետախուզության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության բնորոշ մարտահրավերները *Էջ 5*
Ինչպե՞ս է հետախուզության նկատմամբ ներքին հսկողությունը նպաստում լավ կառավարմանը *Էջ 7*
Ինչպե՞ս է հետախուզության նկատմամբ գործադիր վերահսկողությունը նպաստում լավ կառավարմանը *Էջ 7*
Ի՞նչ դեր է կատարում խորհրդարանը հետախուզության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում *Էջ 8*
Ինչպե՞ս է արդարադատության համակարգը մասնակցում հետախուզության նկատմամբ հսկողությանը և վերահսկողությանը *Էջ 9*
Ինչպե՞ս կարող է հանրային վերահսկողությունը կիրառվել հետախուզության նկատմամբ *Էջ 9*
Լրացուցիչ աղբյուրներ *Էջ 10*

DCAF Geneva Centre for Security Sector Governance

Ինչու՞ է կարևոր հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը

Օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար հետախուզական ծառայությունների կողմից հաշվետու լինելու դեպքում ամրապնդվում է վերջիններիս լեգիտիմությունը և արդյունավետությունը: Ժողովրդավարական վերահսկողությունն առանցքային նշանակություն ունի իշխանության չարաշահումից պաշտպանելու համար՝ ապահովելով ժողովրդավարական կառավարման, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների, ներառյալ՝ գենդերային հավասարության, նկատմամբ հարգանքը: Ժողովրդավարական վերահսկողությունը հետախուզական ծառայություններին պաշտպանում է նաև քաղաքական չարաշահումներից և կարող է օգնել ձևավորելու բավարար ռեսուրսներով ապահովված, ըստ արժանիքների գնահատող և ոչ խտրական աշխատանքային միջավայր՝ հետախուզության ոլորտի մասնագետների համար: Այս պատճառով հետախուզական գործունեության նկատմամբ լավ կառավարման սկզբունքները կիրառելու համար անհրաժեշտ է, որպեսզի հետախուզական գործողության բոլոր բաղադրիչները, ներառյալ՝ իրավական, գործառնական, ֆինանսական և վարչարարական գործընթացները, ենթակա լինեն ժողովրդավարական հսկողության և վերահսկողության:

Ինչպե՞ս է գործում հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը

Հետախուզական ծառայությունների նկատմամբ վերահսկողությունը գնահատում է նրանց կատարողականը, բարեվարքությունը և համապատասխանությունն օրենքին, ինչպես նաև՝ գործադիր և ներքին հսկողության որակները:

Հետախուզական գործունեության նկատմամբ վերահսկողության վերաբերյալ կարևորագույն հարցադրումները ներառում են հետևյալը.

- Արդյո՞ք հետախուզության պաշտոնյաներն աշխատում են իրենց լիազորությունների և իրավունքի գերակայության սահմաններում:
- Արդյո՞ք նրանք ունեն բավարար օրինական իրավասություններ, բյուջե և կադրեր իրենց լիազորություններն իրականացնելու համար:
- Ի՞նչ խնդիրներ են ծագել հետախուզական գործունեությունից կամ գործընթացներից:
- Արդյո՞ք հետախուզական ծառայությունները չարաշահվել են քաղաքական առաջնորդները:
- Արդյո՞ք հետախուզության մասնագետները տրամադրում են անկողմնակալ և անաչառ վերլուծություն, թե՞ նրանց վերլուծությունը քաղաքականացված է:

Գծապատկեր 1. Վերահսկողությունը կարող է տեղի ունենալ հետախուզական գործողությունից առաջ կամ հետո, կամ դրա ընթացքում

Նախորդող (ex ante) վերահսկողություն

- Տեղի է ունենում նախքան գործողությունը սկսելը:
- Սահմանում է իրավական շրջանակը, ստեղծում և հաստատում է բյուջեն, թույլատրում է հատուկ միջոցառումներ:

Ընթացիկ վերահսկողությունը

- Տեղի է ունենում գործողության կատարման ընթացքում:
- Կարող է ներառել տեղում կատարվող ստուգումներ, պարբերական լսումներ, հետախուզական գործունեության մասին կանոնավոր հաշվետվություններ և հատուկ միջոցառումների պարբերական վերանայում:

Հետավարտական (ex post) վերահսկողությունը

- Տեղի է ունենում գործողությունն ավարտելուց հետո:
- Կատարում է թեմատիկ, դեպքային, ծախսային և տարեկան վերանայումներ՝ անդրադառնալով բողոքներին և պարզելով թույլ տրված սխալները:

Պետական տարբեր կարգեր ունեցող երկներում հետախուզական գործունեությունը տարբեր կերպ է վերահսկվում: Արտաքին վերահսկողությունը սովորաբար ներառում է իշխանության գործադիր, դատական և օրենսդիր ճյուղերը՝ խորհրդարանական և փորձագիտական համապատասխան վերահսկողության մարմինների հետ միասին, ինչպես նաև հետախուզական ծառայությունների բարձրաստիճան ղեկավարությունը, որն իրականացնում է ներքին հսկողություն: Անկախ վերահսկողությունը կարող է իրականացվել իրավապաշտպան կառույցների և վերստուգիչ բարձրագույն կառույցների կողմից, մինչդեռ քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցներն ընդհանուր առմամբ երաշխավորում են հանրային կամ ոչ ֆորմալ վերահսկողությունը: Գծապատկեր 2-ում ներկայացված է հետախուզական գործունեության վերահսկողության սխեմատիկ կառուցվածքը:

Հսկողություն և վերահսկողություն՝ նման, բայց տարբեր

Հսկողությունը ենթադրում է կազմակերպության քաղաքականություններն ու գործունեությունն ուղղորդելու իրավասություն, օրինակ՝ սահմանելով կազմակերպության գործունեությունը կարգավորող կանոններ, կանոնագրքեր կամ քաղաքականություններ: Վերահսկողության շրջանակում ստուգվում է կանոնների և օրենքների պահպանումը, ինչպես նաև կանոնագրքերի և քաղաքականությունների կիրառությունը: Վերահսկողությունը կարող է իրականացվել բազմաթիվ տարբեր դերակատարների և կառույցների կողմից, մինչդեռ հսկողությունը սովորաբար վերապահված է լինում գործադիր իշխանությանը: Այդուհանդերձ, ոչ բոլոր կառավարություններն են հստակորեն տարբերակում այս երկու եզրույթները. այսպես, վերահսկողության որոշ մարմիններ կարող են հսկողության որոշ լիազորություններ ունենալ, իսկ հսկողության գործողություններ իրականացնողները՝ վերահսկողության որոշ գործառույթներ:

Գծապատկեր 2. Մի շարք պետական կառույցներ մասնագիտացած դերակատարում ունեն հետախուզության նկատմամբ ժողովրդավարական հսկողության և վերահսկողության գործում



Վերահսկողության մարմինները պետք է ունենան իրենց լիազորություններն արդյունավետորեն կատարելու համար անհրաժեշտ իրավասություններ և ռեսուրսներ: Գծապատկեր 3-ում նկարագրված են հասանելիության, անկախության, հայեցողության և իրավասության առանձնահատկությունները, որոնք ապահովում են հետախուզական գործունեության վերահսկողության արդյունավետությունը: Վերահսկողության մարմինները պետք է ունենան գաղտնի տեղեկատվության հասանելիության իրավունք, հետաքննության բավարար լիազորություններ և հետախուզության ռազմավարական ծրագրեր, բյուջեներ և/կամ բարձրաստիճան նշանակումներ հաստատելու իրավասություն: Արդյունավետ վերահսկողության համար պահանջվող մեթոդներից են ստուգումները, լսումները, փաստաթղթերի վերլուծությունը, հարցազրույցները, վկաների ցուցմունքները և տվյալների շտեմարանների ուղղակի հասանելիությունը:

Անվտանգության ոլորտի լավ կառավարումը (ԱՈԼԿ) և անվտանգության ոլորտի բարեփոխումները (ԱՈԲ)

ԱՈ լավ կառավարման սկզբունքներն են հաշվետվողականությունը, թափանցիկությունը, իրավունքի գերակայությունը, մասնակցությունը, արձագանքողունակությունը, արդյունավետությունը և արդյունքայնությունը: ԱՈ լավ կառավարումը, ըստ այդմ, այն նորմատիվային ստանդարտն է, որի համաձայն պետական անվտանգության ոլորտը պետք է գործի ժողովրդավարական հասարակարգում: ԱՈԲ-ի նպատակն է ԱՈ լավ կառավարման սկզբունքների կիրառումը անվտանգության ապահովման նկատմամբ: ԱՈԲ-ը պետության և մարդու անվտանգության բարելավման քաղաքական և տեխնիկական գործընթաց է, որի շրջանակում անվտանգության ապահովումը, կառավարումը և վերահսկողությունն ավելի արդյունավետ և հաշվետու են դառնում ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության, իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ենթատեքստում: ԱՈԲ-ը կարող է ուղղված լինել պետական անվտանգության ապահովման կոնկրետ մեկ հատվածին կամ ամբողջ համակարգի գործունեությանը, քանի դեռ նպատակը մշտապես արդյունավետության և հաշվետվողականության բարելավումն է:

Գծապատկեր 3 Հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության արդյունավետության համար վերահսկող մարմիններին անհրաժեշտ են հետախուզական ծառայությունների կատարողականը հուսալիորեն գնահատելու լիազորություններ և իրավասություններ



Որո՞նք են հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության բնորոշ մարտահրավերները

1. **Գաղտնիություն.** Մեծ չափերի պետական բյուրոկրատիայի կառավորումը, հսկողությունը և վերահսկողությունն ավելի բարդ է, երբ առկա է գաղտնիությունն ապահովելու անհրաժեշտություն: Այս խնդրի հաղթահարման հարցում կարող են օգնել անկախ, սակայն փոխկապակցված վերահսկողության կառույցները, որոնք օժտված են տեղեկատվության հասանելիության հստակ լիազորություններով:

2. **Հայեցողական իրավասություն.** հետախուզության մասնագետները հաճախ ունեն անկախ որոշումներ կայացնելու հայեցողական իրավասություն և բազմաթիվ նման որոշումներ են կայացնում իրենց աշխատանքի ընթացքում: Դրանց նկատմամբ արդյունավետ վերահսկողությունը ժամանակատար է և բարդ: Անկախ որոշումների կայացումը հնարավորինս կենսունակ պահելու համար կարևոր է, որպեսզի ղեկավարությունը հետախուզական ծառայությունների բոլոր մակարդակներում սերմանի արհեստավարժության մշակույթ՝ հիմնված լավ կառավարման և իրավունքի գերակայության՝ ներառյալ գենդերային հավասարության նկատմամբ հարգանքի վրա:

3. **Քաղաքական կամք.** հաշվի առնելով հետախուզական ծառայությունների հետ առնչվող գաղտնիության մակարդակը (տե՛ս «Հետախուզական ծառայություններ» խորագրով ԱՈԲ տեղեկագիրը), նրանց հաշվետվողականության ապահովումը ընտրություններում քվեներ ձեռք բերելու հարցում ոչ միշտ է արդյունավետ: Սա նշանակում է, որ ընտրված ներկայացուցիչները կարող են շահագրգռվածություն չունենալ իրենց ժամանակը ներդնելու հետախուզության նկատմամբ օրենսդրական կամ գործադիր վերահսկողության մեջ: Քաղաքական որոշումներ կայացնողները կարող են նաև նախընտրել իրենց պաշտպանել որոշակի որոշումների հետևանքներից՝ պահպանելով «ճշմարտանման հերքման» հնարավորությունը: Վերահսկողության մեխանիզմները կարող են օգնել հետախուզական ծառայությունները նմանօրինակ քաղաքական շահարկումներից պաշտպանելու գործում՝ հստակություն մտցնելով այն հարցի շուրջ, թե ով է քաղաքական պատասխանատվություն կրում կայացված որոշումների համար:

4. **Սպառնալիքների վերաբերյալ ուռճացված ընկալումներ**. ազգային անվտանգությանը սպառնացող վտանգների վերաբերյալ ենթադրությունները կարող են հիմք ծառայել արդարացնելու վտանգին ոչ համաչափ գործողությունները, որոնք կարող են վնաս պատճառել ժողովրդավարական կառավարման, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության սկզբունքներին: Հետախուզական վերլուծություններում ազգային անվտանգության սպառնալիքի վտանգների գերագնահատումը կամ թերագնահատումը բացառելու համար անհրաժեշտ է արհեստավարժության բարձր մակարդակ, քաղաքական անկախություն և արդյունավետ վերահսկողություն:

Վերահսկողության և հսկողության մարտահրավերներն անցումային իրավիճակներում

Հետախուզական ծառայությունները սովորաբար կարևորագույն դերակատարում ունեն ավտորիտար կամ տոտալիտար ռեժիմների պահպանման գործում, ինչը նշանակում է, որ նրանք կարող են առանձնահատուկ մարտահրավերներ առաջացնել նորաստեղծ ժողովրդավարական հասարակարգերում.

– Նախորդ ռեժիմի օրոք հավաքված տեղեկատվությունը կարող է օգտագործվել շանտաժի, շորթման կամ քաղաքական մանիպուլյացիայի համար:

– Անցյալում չարաշահումների համար արդարադատության ձգտումը կարող է հզոր շահեր ունեցողների համար քաղաքական անցումն արգելակելու խթան հանդիսանալ:

– Նախկին չարաշահումների համար անպատժելիությունը կարող է սասանել քաղաքական նոր կառուցակարգերը:

– Պետական պաշտոնյաները, ընտրված ներկայացուցիչները, քաղաքացիական հասարակությունը և լրատվամիջոցներն անցումային պետություններում կարող են չունենալ բավարար կարողություններ կամ ցանկություն՝ ուսումնասիրելու հետախուզական գործունեությունը:

– Ժողովրդավարական վերահսկողության և հսկողության իրավական հիմքերի բացակայությունը, ծառայությունների մասնատվածությունը և հետախուզական ծառայություններին վերապահված լայն լիազորությունները դժվարացնում են վերահսկողությունը:

Ելնելով բոլոր այս պատճառներից՝ անցումային իրավիճակներում հետախուզական ծառայություններն ԱՈԲ-ում չներառելը կարող է վտանգել պետության և մարդկային անվտանգությունը:

5. **Միջազգային դաշտ.** Հետախուզության ոլորտում միջազգային համագործակցությունն ընդարձակում է հետախուզության ազգային ծառայությունների իրավասությունները և գործունեությունը հսկողության և վերահսկողության ազգային համակարգերի սահմաններից դուրս: Միջազգային համագործակցության մասին տեղեկատվության բացակայության, կամ ազգային իրավասության սահմաններից դուրս վերահսկողության լիազորությունները չտարածման դեպքում կարող են ծագել խնդիրներ: Միջազգային համագործակցության շրջանակի և բնույթի սահմանումը կարող է կանխել չարաշահումները և ամրապնդել հետախուզության ազգային ծառայությունների վստահությունը:

6. **Տեխնոլոգիական զարգացումներ.** հետախուզական գործունեության մեջ օգտագործվող տեխնոլոգիաները կարող են շատ ավելի արագ զարգանալ, քան դրանք վերահսկելու և հսկելու լիազորություններն ու իրավասությունները՝ հանգեցնելով հաշվետվողականության հարցում թերությունների: Տեխնիկական փորձագետները վերահսկողության մարմիններին կարող են տրամադրել վճռական նշանակության տեղեկություններ, միաժամանակ օրենսդիրը պետք է ապահովի նման փոփոխություններին համընթաց քայլելու համար անհրաժեշտ իրավական դաշտ:

Ինչպե՞ս է հետախուզության նկատմամբ ներքին հսկողությունը նպաստում լավ կառավարմանը

Ներքին հսկողությունը **կանոններ և գործընթացներ է նախատեսում հետախուզական ծառայության ներսում, որոնցով ապահովվում է անձնակազմի արհեստավարժ և արդյունավետ գործունեությունը իրենց լիազորությունների սահմաններում՝ օրենքին համապատասխան և մարդու իրավունքների, ներառյալ՝ գենդերային հավասարության նկատմամբ հարգանքի շրջանակներում,** որոնք լավ կառավարման կարևորագույն հենասյուներն են:

Ներքին հսկողությունը գործում է արդյունավետ կառավարման միջոցով՝

– Համակարգելով հետախուզական բոլոր աշխատանքները հանձնարարելու, կատարվածի վերաբերյալ հաշվետվություններ ներկայացնելու և գնահատելու գործընթացը, ինչպես նաև անձնակազմի կատարողականը ,

– Ուղեցույցեր տրամադրելով հետախուզական անձնակազմին և ապահովելով նրանց գործունեության համապատասխանությունը վարքագծի կանոնագրքերին, կանոնադրություններին, իրավական չափանիշներին և մասնագիտական էթիկային,

– Հայտնաբերելով և շտկելով ոչ ծանր խախտումները՝ միաժամանակ ապահովելով ծանր խախտումների նկատմամբ պատշաճ դիրքորոշման ցուցաբերումն արդարադատության համակարգի կամ վերահսկողության ավելի բարձր կառույցների կողմից:

Մասնագիտական էթիկայի բարձր չափանիշների նկատմամբ հանձնառությունն ավանդաբար հաշվետվողականության առավել արդյունավետ մեխանիզմներից է հետախուզական ծառայություններում:

Ինչպե՞ս է հետախուզության նկատմամբ գործադիր վերահսկողությունը նպաստում լավ կառավարմանը

Ժողովրդավարական պետությունում գործադիրը, որպես կանոն, հետախուզական գործունեության նկատմամբ ունի երկու հիմնական տեսակի հսկողական պատասխանատվություն.

– **Գործառնական պատասխանատվություն՝** սահմանելու հետախուզական ծառայությունների գործունեությանը վերաբերող ընդհանուր քաղաքականությունը, գերակայությունները և բյուջեները, լիազորելու գաղտնի գործողություններ և նախաձեռնելու քննություն չարաշահումների կասկածների դեպքում: Գործադիրը նաև հետախուզական ծառայություններին ապահովում է պատշաճ կարողություններով՝ ազգային անվտանգության քաղաքականության ավելի լայն շրջանակներում ազգային անվտանգությանն աջակցելու նպատակով:

– **Քաղաքական պատասխանատվություն** խորհրդարանի և հանրության նկատմամբ՝ ապահովելու հետախուզական ծառայությունների արդյունավետ, հաշվետու և օրինական գործունեությունը:

Պատասխանատվության այս երկու տեսակները լավ կառավարման առանցքային տարրեր են:

Գործադիր հսկողությունը կարող է իրականացվել ուղղակիորեն կամ անուղղակիորեն: Ռազմական կամ իրավապահ գերատեսչություններում հետախուզական գործառույթները սովորաբար վերահսկվում են ոլորտային, օրինակ՝ պաշտպանության, արդարադատության կամ ներքին գործերի նախարարությունների կամ գերատեսչությունների կողմից: Ինքնավար գործող հետախուզական ծառայությունները հաճախ գտնվում են գործադիրի ուղղակի հսկողության ներքո՝ նախագահի կամ վարչապետի աշխատակազմի կամ գործադիր կոլեգիալ մարմնի, օրինակ՝ ազգային անվտանգության խորհրդատվական խորհրդի միջոցով: (Համակարգային տարբեր կառուցվածքները ներկայացված են «Հետախուզական ծառայությունները» խորագրով ԱՈԲ տեղեկագրում):

Հսկողության և մասնագիտական ինքնավարության միջև հավասարակշռություն գտնելն առանցքային է հետախուզական ծառայությունների արդյունավետության և հաշվետվողականության համար: Մի կողմից, հետախուզական ծառայությունները պետք է բավականաչափ ինքնավար մնան գործադիրի հսկողությունից, որպեսզի պաշտպանված լինեն անհարկի քաղաքական ազդեցությունից և կարողանան երաշխավորել անկախ և անաչառ վերլուծություն: Մյուս կողմից, նույնիսկ հարաբերականորեն ինքնավար հետախուզական ծառայությունները պետք է մնան կառավարության հսկողության ներքո ապահովելու նրանց կողմից իրավունքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը և պետության կամ բնակչության համար սպառնալիքի չվերածվելը:

Ի՞նչ դեր է կատարում խորհրդարանը հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում

Խորհրդարանը սահմանում է իրավական հիմքերը, որի շրջանակներում գործում են հետախուզական ծառայությունները, ինչպես նաև մշտադիտարկում է նրանց կողմից իրավական պահանջների պահպանումը: Խորհրդարանն իրավասու է որոշել՝ արդյոք հետախուզական գործողություններն օրինական են և արդյունավետ: Այն ընդհանուր առմամբ վերահսկում է վարչարարությունը և ֆինանսական կառավարումը՝ հետախուզական գործունեության բյուջեի նկատմամբ հսկողություն իրականացնելու միջոցով: Որոշ պետություններում խորհրդարանը պետք է տեղեկացված լինի գործառնական խնդիրների մասին կամ կարող է անգամ դրանք լիազորելու և վերանայելու դեր ունենալ: Նման ընթացակարգերը կարող են հետախուզական ծառայությունները պաշտպանել քաղաքական իշխանությունների չարաշահումներից:

Խորհրդարանն արտաքին վերահսկողությունն ապահովում է փորձագիտական մարմինների միջոցով, որոնք կարող են վերահսկողության ընդհանուր կամ որոշակի լիազորություններ ունենալ: Տեսականորեն, այս մարմինները մշտական են, սակայն որոշ պետություններում գործում են ժամանակավոր (ad hoc) սկզբունքով: Խորհրդարանական վերահսկողությունը վերանայում է ինչպես հետախուզական ծառայությունների գործունեությունը, այնպես էլ գործադիր հսկողության որակը: Գծապատկեր 3-ում նկարագրված բոլոր բաղադրիչները կարևոր նշանակություն ունեն հետախուզական գործունեության նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունն արդյունավետ դարձնելու համար:

Խորհրդարանը պատասխանատու է նաև իրավական շրջանակներում գենդերային հավասարությունը ներառելու հանձնառությունն ապահովելու համար: Սա ենթադրում է հետախուզական ծառայությունների, ինչպես նաև վերահսկող կառույցների համար անձնակազմի պատշաճ հավաքագրում և ընթացակարգային պահանջներ, ինչպես նաև՝ դրանց կատարման մշտադիտարկում: **Նպատակն արդյունավետ, ներառական և ներկայացուցչական կառույցների ստեղծումն է, որոնք իրենց գործառնական և վարչական պարտավորությունները կատարելիս ապահովում են մարդու իրավունքների նկատմամբ հարգանք՝ բոլոր տղամարդկանց, կանանց, տղաների և աղջիկների անվտանգության տարաբնույթ կարիքները հոգալու ընթացքում:**

Հետախուզական գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրավական հիմքերի բաղադրիչները

Ժողովրդավարական վերահսկողությունը և հսկողությունը կախված են իրավական հիմքերից, որոնցով սահմանվում են.

– Հետախուզական ծառայությունների լիազորությունները, ներառյալ՝ պատասխանատվության որոշակի ոլորտները և դրանց սահմանները,

– Թույլատրելի և անթույլատրելի մեթոդները և միջոցառումները, ինչպես նաև դրանց կիրառման նկատմամբ սահմանափակումները, մասնավորապես՝ ցանկացած մեթոդ և միջոցառում, որը կարող է միջամտել մարդու իրավունքներին,

– Պետության ներսում և արտերկրում հետախուզական ծառայությունների միջև համագործակցության կազմակերպական կառուցվածքները և ձևերը,

– Հսկողության և վերահսկողության այն մեխանիզմները, որոնց միջոցով ծառայությունները հաշվետու են լինում՝ ներառյալ պետության գործադիր, դատական և օրենսդիր ճյուղերը և հատուկ անկախ մարմինները,

– Բողոքների, չարաշահումների կամ իրավունքների խախտումների դեպքում իրավական պաշտպանության միջոցները:

Հետախուզական գործունեության վերահսկողության պատշաճ իրավական շրջանակի ձևավորումը խորհրդարանի պատասխանատվությունն է հանդիսանում. այդ շրջանակի կիրարկումը գործադիրի և դատական համակարգի պարտավորությունն է:

Լրացուցիչ աղբյուրներ

Ժողովրդավարական պետություններում արդյունավետ հետախուզության և վերահսկողության մարտահրավերների մասին.

– Born, Hans and Loch K. Johnson (2005)
Balancing Operational Efficiency and Democratic Legitimacy
In Hans Born, Loch K. Johnson and Ian Leigh (Eds.), Who's Watching the Spies: Establishing Intelligence Service Accountability. Dulles, VA: Potomac Books: 225-240.

– Born, Hans and Aidan Wills (Eds.). (2012)
Overseeing Intelligence Services: A Toolkit
Geneva: DCAF.

– Wills, Aidan (2015)
Democratic and Effective Oversight of National Security Services
Issue Paper. Strasbourg: Council of Europe.

Վերահսկողության և հետախուզության վերահսկողության շրջանակներում մարդու իրավունքների մարտահրավերների մասին.

– United Nations (2010)
Report of the Special Rapporteur on the promotion and protection of human rights and fundamental freedoms while countering terrorism, Martin Scheinin: Compilation of good practices on legal and institutional frameworks and measures that ensure respect for human rights by intelligence agencies while countering terrorism, including on their oversight
Human Rights Council Resolution A/HRC/14/46.

– Bastick, Megan (2014)
Integrating Gender into Oversight of the Security Sector by Ombuds Institutions & National Human Rights Institutions
Geneva: DCAF, OSCE, OSCE/ODIHR.

Անցումային երկրներում հետախուզական ծառայությունների բարեփոխումների մասին.

– Bruneau, Thomas C. and Kenneth R. Dombrosky (2006)
Reforming Intelligence: The Challenge of Control in New Democracies
In Thomas C. Bruneau and Scott D. Tollefson (Eds.), Who Guards the Guardians and How: Democratic Civil- Military Relations. Austin: University of Texas Press: 145-177.

Caparini, Martina and Hans Born (Eds). (2013)
Democratic Control of Intelligence Services: Containing Rogue Elephants
Oxford: Routledge.

– Africa, Sandy and Johnny Kwadjo (Eds). (2009)
Changing Intelligence Dynamics in Africa
Birmingham: University of Birmingham Global Facilitation Network for Security Sector Reform (GFN-SSR).

Հետախուզության ոլորտում միջազգային համագործակցության նկատմամբ վերահսկողության մասին.

– Born, Hans, Ian Leigh and Aidan Wills (2015)
Making International Intelligence Cooperation Accountable
Geneva: DCAF.

– Aldrich, Richard J. (2009)
Global intelligence co-operation versus accountability: New facets to an old problem
Intelligence and National Security, 24(1): 26-56.

DCAF-ի լրացուցիչ հրապարակումներ ԱՈԲ-ի վերաբերյալ

– DCAF-ը հրապարակում է տարատեսակ գործիքներ, ձեռնարկներ և ուղեցույցեր ԱՈԲ-ի և ԱՈԼԿ-ի վերաբերյալ, որոնք կարելի է անվճար ներբեռնել **www.dcaf.ch** կայքէջից: Նյութերից շատերը հասանելի են անգլերենից բացի նաև այլ լեզուներով:

– The DCAF-ISSAT Community of Practice կայքէջը ԱՈԲ-ի մասնագետների համար առաջարկում է առցանց ուսուցման համար հասանելի բազմաթիվ նյութեր: Տե՛ս **http://issat.dcaf.ch**

DCAF Անվտանգության ոլորտի կառավարման ժնևյան կենտրոնը հավատարիմ է պետությունների և ժողովուրդների անվտանգության բարելավմանը ժողովրդավարական կառավարման, օրենքի գերակայության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և գենդերային հավասարության շրջանակներում: 2000 թվականին իր հիմնադրումից ի վեր՝ DCAF-ը նպաստել է խաղաղության և զարգացման կայունությանը՝ օժանդակելով գործընկեր պետություններին և նրանց աջակցող միջազգային կազմակերպություններին անվտանգության ոլորտի կառավարումը ներառական և մասնակցային բարեփոխումների միջոցով բարելավելու նպատակով: DCAF-ը ստեղծում է նորարարական կրթական նյութեր, խթանում է նորմերը և դրական փորձը, տրամադրում է իրավական և քաղաքականության վերաբերյալ խորհրդատվություն և աջակցում է անվտանգության ոլորտում ներգրավված պետական և ոչ պետական շահագրգիռ կողմերի կարողությունների բարձրացմանը:

DCAF-ը երախտապարտ է հետևյալ անձանց
Ռոնջա Հարդերին՝ հետազոտությունը իրականացնելու, գրելու և խմբագրելու աշխատանքներին մասնակցելու համար,
Ջենի Ռաուզին՝ անգլերեն տարբերակի խմբագրման համար,
Ֆլորենս Լեզուրին՝ ֆրանսերեն թարգմանության համար,
Ժերալդին Շանտեգրելին՝ ֆրանսերեն տարբերակը խմբագրելու համար, և
Պետրա Գուրթներին՝ պատրաստման և դիզայնի համար:

**DCAF-ը ԱՈԲ այս տեղեկագրի ստեղծման աշխատանքներում ցուցաբերված ֆինանսական օժանդակության համար երախտապարտ է Նորվեգիայի Հետախուզության խորհրդարանական վերահսկողության հանձնաժողովին (EOS Utvalget):

Սույն հրապարակումից մեջբերումների համար նշե՛լ.
Geneva Centre for Security Sector Governance,
“Security Sector Reform”, SSR Backgrounder Series
(Geneva: DCAF, 2015).

© DCAF ԱՈԲ տեղեկագրերն անվճար կարելի է ներբեռնել www.dcaf.ch կայքեջից: Օգտագործողները կարող են կրկնօրինակել և տարածել այս նյութը՝ DCAF-ը հիշատակելու պայմանով:
Նախատեսված չէ առևտրային օգտագործման համար:

Ծանոթագրություններ

Անվտանգության ոլորտի կառավարման Ժնևի կենտրոն
DCAF - Geneva Centre for Security Sector Governance
Maison de la Paix
Chemin Eugène-Rigot 2E
CH-1202 Geneva, Switzerland
Tel: +41 22 730 94 00
info@dcaf.ch
www.dcaf.ch
Twitter @DCAF_Geneva

ԱՈԲ տեղեկագրերը կարելի է ընթերցել համացանցում
կամ անվճար ներբեռնել SSR Backgrounders ծրագրային
հավելվածը բջջային հեռախոսների և պլանշետների համար.
www.ssrbackgrounders.org